

«ԳՆԻՉԻԿ»

«Գնիչիկ» տարածքն ընդգրկում է ՀՀ Վայոց Ձորի մարզի Արենի, Ագարակաձոր, Գնիչիկ, Խաչիկ համայնքային հողերի զգալի մասը: Այն զբաղեցնում է Արենիի շրջակայքում Արփա գետի ձախակողմյան հարավային ափից մինչև Վայքի լեռնաշղթայի հյուսիսային լանջի ջրբաժանը՝ ներառելով Նորավանքի կիրճը, Արջերի և Մոզրովի քարանձավների գտնվելու վայրերը, Խնձորուտ գետի միջին և վերին հոսանքները:

Այստեղ անտառները քիչ են, ունեն գլխավորապես գետահովտային բնույթ, կամ հանդիպում են փոքր հատվածներով: Երբեմն հանդիպում են աղասեր բուսականության հատվածներ:



Գետ Արփա



Դժողքի ձոր



Նորավանքի կիրճ

«Գնիչիկ» տարածքի յուրահատուկ բնական պայմանները նպաստել են բուսական և կենդանական աշխարհի ձևավորմանը, որն իր ինքնատիպությամբ առանձնահատուկ ուշադրության է արժանի՝ համալրելով Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգը:

Հարուստ ու բազմազան է «Գնիչիկ» տարածքի **բուսական աշխարհը**, որում հաշվարկվում են 15 տեսակի սնկեր և 889 տեսակի բարձրակարգ բույսեր, որոնցից 47-ը գրանցված են Հայաստանի բույսերի Գարմիր գրքում: Այստեղ բուսական աշխարհի ինքնատիպությունը պայմանավորված է նաև 48 էնդեմիկ բուսատեսակների առկայությամբ, որոնցից 16-ը Հայաստանի, 20-ը՝ Հարավային Անդրկովկասի, 7-ը՝ Անդրկովկասի և 5-ը՝ Կովկասի էնդեմիկներ:

Գիտական և բնապահպանական տեսակետից առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում հետևյալ էնդեմիկ տեսակները՝



Տերեփուկ Թամանյանի



Գագ արծվասարի



Բոզ օլիվերի



Հիրիկ գայլականջ



Ցորեն արարատյան

«Գնիշիկ» տարածքի բուսական աշխարհը հարստացնում են նաև ավելի քան 1000 տեսակի օգտակար բույսեր՝ ուտելի, համեմունքային, մեղրատու, դեղատու, կերային, տեխնիկական, գեղագարդային, որոնցից տեղի բնակչության կողմից կենցաղային կարիքների համար մթերվում են հետևյալ տեսակները:

1. **Շուշանաբանջար սոխուկավոր (*Chaerophyllum bulbosum* L.)**– Երկամյա բույս, օգտագործվում է մատղաշ ցողունը և տերևները: Բույսը հարկավոր է մթերել վաղ գարնանը: Խախտված վայրերում, հատկապես բնակավայրերին կից, այն հանդիպում է խիտ համակեցություններով, ոչ խախտված բնական պոպուլյացիաներում աճում է անհամեմատ նոսր՝ հանդիպելով առանձին անհատներով, որոնք միմյանցից հեռու են 1-2 մինչև 10 մ: Հումքի մթերման դեպքում առաջարկվում է հավաքել խիտ համակեցություններից:



2. **Շրեշ ուշագրավ (*Eremurus spectabilis* N. Bieb.)** - ուտելի, դեղատու, տեխնիկական, գեղագարդային բույս է: Ուտելու համար օգտագործվում են մատղաշ տերևները, իսկ կոճղարմատը օգտագործվում է որպես հումք բարձր որակի սոսիսների պատրաստման համար: Հիմնականում աճում է ուղղաձիգ ժայռոտ լանջերի վրա:



3. **Քարխտս կոշտ (*Symphytum asperum*)** - Օգտագործվում են կոճղարմատները: Հանդիպում է անտառներում, գետերի մոտակայքում, ինչպես նաև խախտված ապրելավայրերում առաջացնում է մոնոդոմինանտ բուսուտներ, որոնք հեռանկարային են արդյունագործական մթերման համար:



4. *Մրհունդ խոցված (Hypericum perforatum L.)* - դեղատու, համեմունքային, մեղրատու, տեխնիկական, գեղագարդային բույս է: Օգտագործվում են ծաղկաբույլերը:



5. *Խնկածաղիկ սովորական (Origanum vulgare L.)* - դեղատու, համեմունքային, մեղրատու, տեխնիկական, գեղագարդային բույս է: Օգտագործվում են ծաղկաբույլերը:



6. *Ճարձատուկ սովորական (Cichorium intybus L.)* - Դեղաբույս է, օգտագործվում են ստորգետնյա և վերգետնյա օրգանները: Մրմատն օգտագործվում է որպես սուրճի փոխանորդ: Արդյունագործական նպատակով մթերում իրականացնելու համար անհրաժեշտ է ընտրել էկոլոգիապես մաքուր տարածքներ, քանի որ այն հիմնականում աճում է ճանապարհների եզրերով կամ խախտված վայրերում:



7. *Անթառամ ծալքավոր (Helichrysum plicatum DC)* - Դեղաբույս է: Օգտագործվում են ծաղիկները:



8. *Լերդախոտ ալեհեր (Teucrium polium)* (Նկար 10): Օգտագործվում են ծաղկաբույլերը:



Հարուստ ու բազմազան է նաև «Գնիշիկ» տարածքի կենդանական աշխարհը, որում հաշվարկվում են 151 տեսակի անողնաշար և 217 տեսակի ողնաշարավոր կենդանիներ: Դրանցից 57-ը գրանցված են Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում: Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում հետևյալ տեսակները: Սողուններից՝ Հայկական լեռնատափաստանային իծը և Հայկական իծը:



Հայկական լեռնատափաստանային իծ

Հայկական իծ

Թռչուններից՝ քարարծիվը, գառնանգղը, սպիտակագլուխ անգղը, բվեճը:



Քարարծիվ

Գառնանգղ

9. *Զիվան հսկայական (Cephalaria gigantea)* (Նկար 12): Օգտագործվում են միայն ծաղկած գլխիկները:



Սպիտակագլուխ անգղ

Բվեճ

Կաթնասուններից՝ Բեզուարյան այծը, Մուֆլոնը, Անտառակատուն, Ընձառյուծը, Հարավային պայտաքիթ չղջիկը, Սովորական երկարաթև չղջիկը, Ասիական լայնական չղջիկը, Շելկովնիկովի կուտորա, Գորշ արջը:



Բեզուարյան այծ



Մուֆլոն



Անտառակատու



Ընձառյուծ



Հարավային պայտաքիթ չղջիկ



Սովորական երկարաթև չղջիկ



Ասիական լայնական չղջիկ



Շելկովնիկովի կուտորա



Գորշ արջ

Գնիչիկ տարածքն աչքի է ընկնում բնական և մշակութային ժառանգության ինքնատիպությամբ, որի շնորհիվ էլ գայթակղում է զբոսաշրջիկներին: Այն հարուստ է այնպիսի բնական արժեքներով, ինչպիսիք են Արենիի ջրվեժը, Մագիլի, Թոչնի, Մոզրովի և Արջերի քարանձավները, բազմաթիվ քարայրները, Գրավի աղբյուրը, Էկզոտիկ ժայռային գոյացությունները և այլն:



Արենիի ջրվեժը



<<Փուկեր>> քարաքանդակ



Կարմրավուն ժայռային գոյացություն



Արծաթավուն ժայռային գոյացություն



Գրավի աղբյուր



Մագիլի քարանձավ



Մոզրովի քարանձավ



Սուրբ Աստվածածին



Արենիի հին գերեզմանատունը

Անկրկնելի բազմաթիվ մշակութային արժեքների առկայությունը վկայում է, որ Գնիշիկի տարածքը հարուստ է եղել ոչ միայն պատմական իրադարձություններով, այլև հանդիսացել և հանդիսանում է հայկական մշակույթի զարգացման կենտրոն: Անջնջելի տպավորություն են թողնում Արենիի Սուրբ Աստվածածին եկեղեցին իր հին գերեզմանատնով, Նորավանքը, Գնիշիկ գյուղատեղիի դամբարանադաշտերը՝ յուրահատուկ խաչքարերով:



Նորավանք



Գնիշիկի խաչքարերից